ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 435

1 նոյեմբերի 2024 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 137-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի N 567-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1112-Ն որոշումները՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2017 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշմամբ հաստատված հավելվածի 32-րդ տողի՝ «Տավրուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել «Տավրուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կազմակերպության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 1
ք. Կապան